

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳՎԱՏՈՒ ԳՆԱԳԱՆԱԿՈ

3. Ղ. ՄՈՐԶՈՑԱՆ

Գրիգոր Նարեկացու Մատյանի Բան ՀԵ-ն ունի «Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն, եւ այս ի մայրն իմ լուսափառ խոստովանեալ դաւանութիւն» վերջվածքը, իսկ Բան ՂԳ-ն՝ «Այն իմ ձեռնարկութիւն ի սրբութիւնսն, եւ այս՝ արձանագրութիւն ի սրբութեանցն սրբութիւն» վերջվածքը: Դրանցից առաջինի կապակցությամբ Մատյանի ակադեմիական հրատարակության ծանոթագրություններում կարդում ենք. «Գ. Ավետիքյանը գտնում է, որ այն ասելով Նարեկացին նկատի ունի գլխի առաջին մասը, այս ասելով՝ երկրորդ մասը («Նարեկյութ», էջ 403, ծնթ. 99)»¹ (ընդգծ. աշխատաս. է - Հ. Մ.): Իսկ երկրորդի համար գրված է. «90. Այս վերջվածքը, ըստ Գ. Ավետիքյանի, վերաբերում է ՂԲ և ՂԳ գլուխներին. այն՝ իմ ձեռնարկութիւն ասելով Նարեկացին նկատի ունի ժամահարի մասին ներքողը, եւ այս՝ արձանագրութիւն ասելով՝ մյուսոնին նվիրված բացատրական ճառը (տե՛ս «Նարեկյութ», էջ 536, ծնթ. 151)» (էջ 1121, ընդգծ. աշխատաս. է - Հ. Մ.): Ինչպես տեսնում ենք, աշխատասիրողները թե մեկ և թե մյուս դեպքում վկայակոչում են Գ. Ավետիքյանի տեսակետը, որը առաջին դեպքում ըստ էության ճիշտ չէ: Բանն այն է, որ Նարեկացու խնդրո առարկա մտքերն ունեն տրամաբանական տեսակետից նույն կառուցվածքը՝ «այն իմ ..., եւ այս...», բայց ականավոր հայագետը մի դեպքում մեկնաբանել է որպես նույն գլխի առաջին և երկրորդ մասեր, իսկ մյուս դեպքում՝ որպես տարբեր գլուխներ նշանակող արտահայտություն: Ընդսմին, աշխատասիրողները Մատյանի 75-րդ գլխի 1-ին ծանոթագրության մեջ գրել են, որ Գ. Ավետիքյանի կարծիքով «այս գլուխը պետք է դրված լիներ ԼԴ գլխից հետո, քանի որ այն նվիրված է Մուրբ Երրորդության հավատի դավանությանը՝ ըստ Նիկիական հանգանակի, իսկ այս գլուխը՝ եկեղեցու դավանության խորհրդին՝ ըստ առաքելական և Կոստանդնուպոլսի հանգանակների» (էջ 1089): Ավելին, նրանք հարկ են համարել ասելու նաև, որ «դա զուտ տրամաբանական հետևություն է և ոչ թե հիմնավոր փաստարկ» (ն. տ.), որ «այս գլուխը նա գրում է հիշատակելով նաև իր այն ճառը (Բան ԼԴ), որը նվիրված է Երրորդության դավանությանը» (ն. տ.), բայց այս ամենից հետո չեն տեսել Գ. Ավետիքյանի մեկնաբանության անճշտությունը:

Մինչև իրականում Մատյանի ՀԵ գլխի՝ վերը բերված վերջվածքի «այն իմ» արտահայտությունը վերաբերում է ոչ թե նույն գլխի առաջին մասին, այլ ամբողջ ԼԴ գլխին: Իսկ ի՞նչ կովաններ ունենք նման եզրակացության համար:

1. Բանաստեղծը ՀԵ բանի առաջին հատվածում շատ պարզ ու որոշակի ասում է, որ ինքը Մատյանի այս գլուխը ստեղծել է «ի յիշատակ ճառիս հաւատոյ Երրորդութեանն դաւանութեան» (էջ 546): Ճիշտ է, այս նույն գլխի առաջին մասում խոսվում է Մուրբ Երրորդության դավանանքի մասին, բայց բանաստեղծը դա չի

¹ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 1094 (այսուհետ այս հրատարակությունից օգտվելիս էջահամարները նշելու ենք տեքստում՝ փակագծերի մեջ):

համարում Սուրբ Երրորդության իր հավատի հանգանակը, մինչդեռ ԼԳ բանի Գ հատվածի առաջին տողերում հստակ գրել է. «Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի, զոր շաւղ կարգիդ վերանկարէ» (էջ 386): Փաստորեն բանաստեղծը միանշանակ ասում է, որ Սուրբ Երրորդության իր հավատի հանգանակը ինքը վարդապետել է հենց ԼԳ գլխում:

2. Ասելով՝ ՀԵ բանը գրել է «ի յիշատակ ճառիս», նորից նկատի է ունեցել Մատյանի ԼԳ գլուխը, որովհետև ճառ բառը, ի թիվս այլևայլ իմաստների, ունի նաև գլխի իմաստ: Հենց Գ. Ավետիքյանի համահեղինակած Հայկազյան լեզվի բառգրքում բառիս բազմաթիվ իմաստների շարքում նշվում է նաև՝ «Գլուխ մի բանի»²:

3. Բանաստեղծը, Մատյանի ԼԳ գլխում շարադրելով Սուրբ Երրորդության, իսկ ՀԵ գլխում՝ եկեղեցու մասին իր ըմբռնումները, թե՛ մեկը և թե՛ մյուսը հասցեագրել է աշխարհի բոլոր ժողովուրդներին, որպեսզի նախ՝ հենց իրենից իմանան իր հավատի հանգանակը և ոչ թե մեկ ուրիշից, և ապա հետևեն իր օրինակին ու յուրացնեն իր գաղափարները: Այսինքն՝ իբրև ճշմարիտ քրիստոնյա ու քրիստոնեական միասնական եկեղեցու պատմական ավանդույթների կրող ու պաշտպան՝ Նարեկացին ցանկացել է Սուրբ Երրորդության մասին Նիկիո ժողովի բանաձևումները և քրիստոնեական եկեղեցու մասին իր պատկերացումները հասանելի ու ընդունելի դարձնել նաև աշխարհի բոլոր ժողովուրդներին ու ազգերին: Չմոռանանք, որ այդ ժամանակ մեզանում թոնդրակեցիները, իսկ այլ երկրներում գործող համանման աղանդները նախ և առաջ հարձակման թիրախ էին դարձնում հենց Սուրբ Երրորդության հավատի հանգանակն ու քրիստոնեական եկեղեցու մասին ավանդական պատկերացումները: Ընդ որում, թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում բանաստեղծը դա անում է տվյալ գլխի հենց սկզբում, որով փաստում է այդ գլխի գրության բուն նպատակն ու խնդիրները: Փորձենք ասվածը հաստատել հեղինակային խոսքով.

Բան ԼԳ, Ա

«Արդ, առ այտոքիլ թշուռացեալ շնչոյս իմոյ իղձք եւ առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիս զամենայն, աստուած, զոր ի նախնին ճառեալ եւ յերկրորդումս ցուցից՝ Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս՝ ի կոյտս բազմութեան ազգաց եւ թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն զոհարանութիւնք» (ընդոճ. իմն է- Հ. Մ.):

Բան ՀԵ, Ա

«Այլ բանգի յարգանդէն, յորում յղացայ հոգեւոր երկամբք ծնիցեալ, զմեծ եւ զերջանիկ ոշխոյ անարատ՝ ամենից կուսից իսկուհի, զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի, զի ծանիցի, ցուցցի և ալոց եւս ապագայիցն ազգաց պատմեսցի որքանութիւն փառաց խնկելոյն՝ արժանապէս պաշտմամբ պատուեալ իբր մաքուր մարմին ընդ զլիտյ մարդեղութեան Բանին աստուծոյ՝ ի յիշատակ ճառիս հաւատոյ Երրորդութեանն դաւանութեան» (ընդոճ. իմն է- Հ. Մ.):

² Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Կ. երկրորդ, Եր., 1981, էջ 172:

³ Քննական բնագրի աշխատասիրողները, քաղելով «զոր ի նախնին ճառեալ եւ յերկրորդումս ցուցից» միտքը, ծանոթագրել են, որ ասվածը վերաբերում է ԼԳ գլխին, որի «նման այս գլուխը ևս ունի դավանաբանական բովանդակություն: Առաջին մասը նվիրված է Սուրբ Հոգուն՝ առեմախոսության կամ բեմախոսության շնորհի հայցմամբ, երկրորդ մասը՝ Նիկիական հավատի հանգանակին, երրորդը՝ զոհարանություն է Քրիստոսին: Որ այս գլուխը ևս սկզբնապես եղել է Մատյանում, ակներև է հենց բերված արտահայտությունից: ԼԳ գլուխը ԼԳ գլխի տրամաբանական շարունակությունն է թե՛ կառուցվածքային և թե՛ բովանդակային առումով» (էջ 1040):

Կարծում են, ընդգծված տեղիների ընդհանրությունն այնքան ակնհայտ է, որ կարիք չկա դա ապացուցելու:

4. Վերջապես, ունենք մեկ այլ կարևոր փաստ ևս. նույն ՀԵ բանի Ա հատվածում, իր խոսքն ուղղելով Աստծուն, բանաստեղծն ասում է. «...մատուցանեմ, ընծայեմ դարձնալ աստանար աանդ գովեստի դաւանման ճշմարտականի» (տ. 4-5): Փաստորեն բանաստեղծը հասկացնում է, որ ինքը Ս. Երրորդության ճշմարիտ դավանանքի իր հավատամքը արդեն մեկ անգամ շարադրել է, իսկ այստեղ նույնը մատուցում, ընծայում է դարձյալ, այսինքն՝ երկրորդ անգամ: Ինչպես արդեն ասվեց, բանաստեղծը ԼԳ բանի Գ հատվածում միանշանակ հայտնում է, որ Սուրբ Երրորդության իր հավատի հանգանակը վարդապետել է հենց այդ գլխում՝ «գայս վարդապետեցի»:

Թվում է՝ ասվածը բավական է համոզվելու, որ Մատյանի ՀԵ բանի վերջվածքի «այն իմ հաւատ յԵրրորդութիւնն» արտահայտությունը վերաբերում է ոչ թե նույն ՀԵ բանի առաջին մասին (տ. 1-104), որտեղ նույնպես խոսվում է Սուրբ Երրորդության մասին, այլ ԼԳ բանին: Սա շատ կարևոր է, որովհետև նախ՝ եապես հարստանում է մեր պատկերացումը Մատյանի կառուցման նարեկացիական սկզբունքների մասին: Ճիշտ է, բանաստեղծը հաճախ է նոր գլուխ սկսելիս հիշեցնում նախորդ գլուխներում իր ասածները, բայց, իբրև կանոն, դա անում է հարակից գլուխների համար, մինչդեռ այս դեպքում կապվող հատվածներն իրարից բաժանված են քառասուն գլխով: Երկրորդ, որ ավելի կարևոր է, արմատապես մերժվում է ԼԳ և ՀԵ, ինչպես նաև ՂԲ և ՂԳ գլուխների մասին առանձին նարեկացիագետների արտահայտած այն կարծիքը, թե իբր ԼԳ, ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխներն ավելացրել են ուրիշները: Հետևաբար միանգամայն իրավացի են Մատյանի քննական բնագրի կազմողները, որ, ՀԵ գլուխը համարելով հենց Մատյանի համար գրված, եզրակացրել են, թե «այն ո՛չ պետք է տանել հավելված, ինչպես արել է Գ. Խաչատուրյանը («ՀԵ գլուխի բովանդակության նկատառումով հարմար դատած ենք զետեղել գայն թարգմանությանս հավելվածական մասին մեջ, պահելով մեկտեղ գլխակարգության սովորական շարքը»): «Նարեկ. Մատեան ողբերգութեան», էջ 275) և ո՛չ էլ իրաժարվել թարգմանելուց՝ դավանաբանական բնույթի պատճառով գտնելով, որ «հազիվ թե հանճարեղ հեղինակի գրչին պատկանեն» («Մատյան ողբերգության», զրաբարից թարգմանեց Մ. Խերանյանը, էջ XXXIV), ինչպես վարվել են Մ. Խերանյանը և Վ. Գևորգյանը»³: Իմ կարծիքով, ասվածը ճիշտ է ոչ միայն

³ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 1090: Լեոնիդ Միր դրանցից ռուսերեն թարգմանել է միայն ԼԳ-ն, իսկ մյուսների մասին գրել է. «75, ինչպես նաև 92 և 93 գլուխները աշխարհաբար հայերեն և այլ լեզուներով թարգմանություններում, որպես կանոն, բաց են թողնվում: Այդ գլուխներն ունեն գուտ աստվածաբանական բնույթ» (տե՛ս Գրիգոր Կարեազի, Книга скорбных песнопений. Перевод Леонида Мила, Ер., 1984, с. 250): Մինչդեռ Վլադիմիր Միկուշևիչը թարգմանել է նաև Բան ՀԵ-ն, իսկ ՂԲ և ՂԳ գլուխների մասին տողատակի ծանոթագրությամբ հայտնել է. «Հիմքեր կան ենթադրելու, որ 92 և 93 գլուխները ներառվել են հետագայում, ուստի դրանք չեն մտնում ներկա հրատարակության մեջ» (տե՛ս Գրիգոր Կարեազի, Книга скорбных песнопений. Поэма. Перевод с древнеармянского Владимира Микушевича, М., 1985, էջ 342): Բարեբախտաբար Մատյանը ռուսերեն տպագրվել է նաև «Արևելյի մատեմագրության հուշարձաններ» մատուցանալով՝ LXXVII, որտեղ արդեն ներկայացված են հիշյալ բոլոր գլուխները, որանցից 92-րդ գլխի ծանոթագրություններում կարդում ենք. «Այս, ինչպես և հաջորդ՝ 93-րդ, գլխի պատկանելությունը Գրիգոր Նարեկացու գրչին հայագետների մեջ կասկած չի հարուցում, սակայն հայտնի չէ, այն ներառվել է «Մատեան ողբերգութեան»-ի կազմում հենց հեղինակի, թե գրիչների կողմից» (տե՛ս Գրիգոր Կարեազի, Книга скорбных песнопений. Перевод с древнеармянского и комментарий М. О. Дарбинян-Меликян и Л. А. Ханларян, вступительная статья С. С. Аверинцева, М., 1988, էջ 392): Ի դեպ,

ՀԵ, այլև ԼԴ, ՂԲ և ՂԳ գլուխների համար: Ինչ վերաբերում է դրանց դասավորությանը, ապա, համաձայն Մատյանի կառուցվածքի, ԼԴ և ՀԵ գլուխները ճիշտ իրենց տեղում են, իսկ ՂԲ և ՂԳ գլուխները պետք է լինեն վերջում՝ ՂԴ և ՂԵ գլուխներից հետո՝ համապատասխան համարակալումով⁴:

Առայժմ անդրադարձանք Մատյանի կառուցվածքային հարցերին, որոնց ճիշտ լուծումն ունի կարևոր նշանակություն նրա բովանդակության ընկալման տեսակետից:

Քանի որ ԼԴ, ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխներն իրենց դավանաբանական բնույթի պատճառով ըստ էության անտեսվել կամ թերագնահատվել են, ուստի դա բացասաբար է անդրադարձել ինչպես Նարեկացու գրական ժառանգության, այնպես էլ Մատյանի հասկացման ու գնահատման վրա: Մինչդեռ, ունենալով հենց դավանաբանական բնույթ, դրանք մեծապես նպաստում են Մատյանի ճիշտ ըմբռնմանը: Բանն այն է, որ Ս. Պատարագի տրամաբանությունն ու կառուցվածքը, համաձայն որի ստեղծվել է նաև Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը, որպես բանաստեղծի կենդանի պատարագում, ինքնըստինքյան ենթադրում էր թե ԼԴ և ՀԵ և թե ՂԲ և ՂԳ գլուխների գոյությունը: Քանի որ վերջին երկու գլուխների հարցը հատուկ քննարկել ենք առանձին հոդվածով⁵, ուստի այստեղ կփորձենք ծանրանալ միայն ԼԴ և ՀԵ գլուխների բովանդակության վրա:

Ինչպես ասվեց, Մատյանում ԼԴ և ՀԵ գլուխների գոյությունը թելադրված է համաձայն Ս. Պատարագի կառուցվածքի, որը, բաղկացած լինելով երկու մասից՝ չմկրտվածների պատարագ և բուն պատարագ, առաջին մասում (բանք՝ Ա-ԾԴ) ենթադրում էր ԼԴ գլխի, իսկ երկրորդ մասում (բանք՝ ԾԵ-ՂԵ)՝ ՀԵ գլխի գոյությունը: Ներկա դեպքում առավել կարևոր է դրանց բովանդակությունը, այսինքն՝ ինչ է արտահայտել բանաստեղծը:

Ուշագրավ է, որ թեև ԼԴ բանում բանաստեղծը շարադրել է Ս. Երրորդության մասին հավատի հանգանակը՝ համաձայն Նիկիայի ժողովի որոշման, բայց և այնպես, այդ գլխի սկզբում դիմելով Աստծուն, ցանկանում է, որ այն լինի «թշուառացեալ շնչոյս իմոյ իղձք եւ առ քեզ դաւանութիւնք յարմարականք»: Փաստորեն բանաստեղծն այս գլխում, բացի Ս. Երրորդության հավատի հանգանակը շարադրելուց, արտահայտում է նաև որոշ իղձեր ու ցանկություններ, որոնցից, իմ կարծիքով, հատկապես կարևոր է այս մեկը. «Լուսաւորեա՛ ի յիս վերստին գծագումն անստուեր հրաշից գիտութեան աստուածութեանդ քոյ, հզար, արժանի լինել առնել և ուսուցանել՝ յարիմակ բարեաց աստուածասէր յողաց» (Բան ԼԴ, տ. 27-30, ընդգծ. իմն է՝ Հ.Մ.): Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը խնդրում է ոչ թե ընդհանրապես լուսավորել իր մեջ աստվածային հրաշալի գիտության ծագումը, այլ վերստին, այսինքն՝ նորից, կրկին, դարձյալ, երկրորդ անգամ ևն, որպեսզի արժանի լինի ուսանելու և աստվածասեր ունկնդիրներին ուսուցանելու:

Մատյանի գրության 1000-ամյակի առթիվ Ս. Խերանյանի թարգմանության վերահրատարակության մեջ Մեսրոպ Արք. Աշճյանի առաջարկությամբ այդ բացը լրացրել է Ա. Մադոյանը (տե՛ս Ս. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյանը, Եր., 2003):

⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկի կառուցվածքի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 2: Ասենք նաև, որ հենց այդպիսին է Մատյանի կառուցվածքը Թորգոմ Գուշակյանի աշխարհաբար թարգմանության հրատարակություններում, թեև թարգմանիչն այդ մասին ոչինչ չի ասում (տե՛ս, օրինակ, «Նարեկ. աղօթքամատեան Ս. Գրիգոր Նարեկացու», արդի հայերենի վերածեց Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան (Պատրիարք Ս. Երուսաղեմի), Անթիլիաս, 1999):

⁵ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, նշվ. աշխ.:

Իրավամբ հարց է ծագում. ինչո՞ւ կուսակրոն Գրիգոր Նարեկացին, որ Մատ-
յանը գրելիս արդեն ուներ ուսանելու և աստվածասեր լսողներին ուսուցանելու
բազմամյա հարուստ փորձ ու հմտություն, Աստծուց խնդրում է իր մեջ **վերստին**
լուսավորել աստվածային հրաշալի գիտության անսովեր ծագումը, որպեսզի ար-
ժանի լինի ոչ միայն ուսանելու, այլև ուսուցանելու աստվածասեր ունկնդիրներին,
որոնց թվում առաջին հերթին նկատի ունի իր սիրելի աշակերտներին: Չէ՞ որ
նույն Մատյանում ինքն իսկ իր մասին դեռ գրելու էր.

**Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախագ,
Ռաբբի ուրբի անուանեցայ,
Եւ զգովեստն առ աստուած եղծի,
Քարի ասացայ՝ առ եղկութեանն ժառանգութիւն,
Սուրբ վկայեցայ ի մարդկանէ,
Որ եմ անմաքո՛ւր առաջի աստուծոյ,
Արդար դաւանեցայ ամենայն իրաւք ամբարիշտս,
Հեշտացայ ի գովեստ մարդկան,
Չի ծաղր եղէց յատենին Քրիստոսի,
Յաւազանէ կոչեցայ Արթուն,
Եւ ես ի քուն մահու ննջեցի,
Ի փրկութեանն ատուր Հսկող յորջորջեցայ,
Բայց զգաստութեանն՝ աչս կափուցի (Բան ՀԲ):**

Քանի որ ԼԴ բանը, ինչպես վերը ցույց տրվեց, անխզելիորեն կապված է
Բան ՀԵ-ի հետ, ուստի փորձենք նույն տեսանկյունից քննել նաև Մատյանի ՀԵ
գլուխը, որը հիմնականում նվիրված է Քրիստոսի եկեղեցու փառաբանությանը, ե-
կեղեցի, որը բանաստեղծն անվանում է «գպանծալի մայրն իմ գովելի» (տ. 12-13),
քանզի իրեն համարում է նրա արգանդից «հոգեւոր երկամբք ծնիցեալ» (տ. 11):

Իմիջիայլոց, այս գլխում նույնպես, ինչպես Բան ԼԴ-ում, նախքան բուն ասե-
լիքին՝ եկեղեցու մասին իր պատկերացումների շարադրանքին անցնելը, երկրորդ
հատվածում շատ կարևոր մտքեր է արտահայտում իր մասին: Հարկ եմ համարում
բերել այդ հատվածն ամբողջությամբ. «Եւ արդ, ի յայս արիմակ հոգեմկար պատ-
կերի բանի, որ **զխորանէս** լուսոյ յարմարի, ընկալ՝ զիս, գթած, արհմեալ, քաւե-
ցեալ և սրբեալ ի սմին: Հան սովա ի հոգույս զնախատինս մեղացս, ամմեղս եւ
անքի՛ծս **ընդ հովանեաւ սորին բազմեցո, յաւել՝ զտկարս ի տունն Դաթի և ան-
դուստ փոխեալ ի տունդ աստուծոյ**, ըստ մարգարէին ձայնի, որ ի քեզ, Յիսուս, ակ-
նարկի: Մի՛ սոսկ զմտիցն եւ մի՛ անազուտ զելիցն հետեւութիւն արասցես: Մի՛
զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարեսցիս եւ մի՛ զհամբոյր ողջունիս անկարգ
ինչ վարկանեսցիս: Մի՛ զպաշտանն ապաշնորհ գրեսցես եւ մի՛ զերկրպագութիւնն
անխորհուրդ ւքցես: Մի՛ անպտող լիցի տեսականութիւն պատկերին, եւ մի՛ աննը-
շոյլ՝ կերպարանին սքանչելութիւն: Մի՛ անհուր ողջակիզին սպանդ մոռացի, եւ մի՛
պատարագ ուխտի այս ճառի արտաքոյ ցրեսցի: Մի՛ ճաշակդ լուսոյ ինձ մահու լի-
ցի, եւ մի՛ բաժակ քո կողիցդ արեան ի դատապարտութիւն եղիցի» (Բան ՀԵ, տ. 18-
31, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Նկատի ունենալով ասվելիքի կարևորությունը՝ հարկ եմ համարում բերել
նաև նույն հատվածի աշխարհաբարը Ա. Մադոյանի թարգմանությամբ.

**Հոգեմկար բանի պատկերի այս օրինակով,
Որ հարմարվում է լույսի խորանին,
Գթած, օրհնյալ, ընդունի՛ր ինձ՝**

Զավված ու սրբված սրա մեջ:
 Հանի՛ր սրանով հոգուցս մեղքի նախատինքները,
Քազմեցրու սրա հովանու ներքո՝ անմեղ ու անբիծ,
Տկարիս Դավթի տանը գումարիւր,
Այնտեղից Աստծու տունըդ փոխադրիւր,
 Ըստ մարգարեի, Հիսուս, որ քեզ է ակնարկում,
 Մոսկ մուտքի եւ անօգուտ ելքի չհետեւես,
 Ջերմությունն հավատիս քեզ պաղ չքվա,
 Եվ ողջույնի համբույրս անարգ չհամարես:
 Պաշտամունքս ապաշնորհ չորակես,
 Երկրպագությունս իբր անխորհուրդ չլքես:
 Պատկերի տեսիլն անպտուղ չլինի,
 Իսկ սքանչելի կերպարանքը՝ անմշույլ:
 Չմոռացվի սպանդն անկրակ ողջակեզի,
 Ճառիս ուխտի պատարագը վտարվելով չցրվի,
 Լույսի ճաշակըդ ինձ մահ չբերի,
 Կողերիդ արյան բաժակը
 Դատապարտություն չլինի⁶:

Բերված հատվածում, իմ կարծիքով, ամենակարևորը, որով պայմանավորված են նաև բանաստեղծի մյուս խնդրանքները, եկեղեցու խորանի հովանու ներքո նստեցնելու բաղձանքն է, ուստի այն կրկնում է՝ ասելով՝ «յաւել գտկարս ի տունն Դաւթի»: Իսկ ի՞նչ է նշանակում «Դավթի տուն»: Մատյանի ակադեմիական հրատարակության աշխատասիրողները, ծանոթագրելով մեզ հետաքրքրող հատվածը, գրում են. «3. ... **յաւել գտկարս ի տունն Դաւթի եւ անդուստ փոխեալ ի տունդ աստուծոյ**»-Նարեկացին փոխաբերաբար Դավթի տուն է կոչում եկեղեցին, աստծո տուն՝ երկնային արքայությունը (հմմ. Չաք., ԺԲ, 8)» (էջ 1090, ընդգծ. աշխատաս. է - Հ.Մ.):

Կրկին կանգնում ենք գրեթե նույն հարցի առջև. ինչո՞ւ բանաստեղծը, որ առնվազն քառորդ դար առաջ ձեռնադրվել էր կուսակրոն քահանա և այնուհետև անմնացորդ ծառայել էր նույն եկեղեցուն թե՛ որպես վարդապետ ու վարժապետ, թե՛ որպես բանաստեղծ ու գիտնական, նույնիսկ կոչվել սուրբ, հանկարծ Մատյանի ԻԵ բանում տարակուսանքով հարցնում է Աստծուն. «Իցե՞ արդեք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ վերստին կցեալ» (տ. 64), «Արդեք մտի՞ց ի խրախճանութիւն խորանին լուսոյ՝ քեւ առաջնորդեալ» (տ. 76), իսկ այս գլխում, շարադրելով եկեղեցու մասին իր հավատամքը, խնդրում է իրեն նստեցնել եկեղեցու խորանի հովանու ներքո, որը, համաձայն ժամանակի ընդունված կրոնաստվածաբանական պատկերացման, միակ ուղին էր երկնային թագավորություն տեղափոխվելու: Նպատակ, որին հասնելու հույսը փայփայում էր յուրաքանչյուր հավատացյալ: Իսկ Նարեկացին այդ գաղափարի ամենաջերմեռանդ կրողներից ու հետևորդներից էր: Մատյանից տառաջիորդն մի քանի տարի առաջ գրած Առաքելոց ներբողում, մանրամասն շարադրելով Առաքյալների կատարած գործերը, որոնցից մեկն էլ այն էր, որ «զեւս ընթացից երկնային մտիցն բնակութեան՝ հողածնաց բացին»⁷, ասում է, որ այդ ձևով «լցան լիացան և երանեցան,

⁶ Ս. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Սկրտիչ Խերանյանը, Եր., 2003, էջ 451-452:

⁷ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 437:

ապա նուիրեալ պատարագեցան ի սպանդ վերնական բարձրեալ սեղանոյն, և նկարագրեալ դրոշմեցան ի գիր մատենի վերին դպրութեան»⁸: Իբրև կուսակոնն հոգևորական՝ Նարեկացին ամբողջ կյանքում երագել ու ձգտել է մմանվել հենց առաքյալներին, ուստի, դույզն-խկ չթաքցնելով իր այդ ձգտումը, Առաքյալներին նվիրված ներբողում իր խոսքն ամփոփում է. «Սոքա մեր նախնիք, սոքա մեր ծնողք ըստ աւագանին, սոքա դաստիարակք մերս իմաստից, սոքա վարդապետք աշակերտելոցս, սոքա դաւանութեան բարեաց ուսուցիչք, սոքա եկեղեցւոյ սրբոյ հիմնադիրք, սոքա կցորդակիցք արդարութեան պաշտամանս, սոքա խրախոյսք ընտրական կրօնիցս, սոքա ձեռնդրողք քահանայութեանս, ի Քրիստոսէ ընկալեալք և մեզ մասնատրեալք, հաւատարիմ ուխտի դաշնատրք, վկայք վեհագոյնք աստուածատունկս կարգի: Ի ձեռն սոցա ընդունական և հաճոյական մաղթանաց հայցման աղօթից՝ ընկալցուք և մեք մասն փրկութեան ի բարերար գորութեանց խնամոցն աստուծոյ, գօրանալ ձեռին մեր ի շնորհս, ի բժշկութիւնս, ի բաշխումն կենաց պարգեաց: Վասն նոցին ընդ նոսին, իմում հաւատոյ մասին՝ քաւեալք փրկեալք և արդարացեալք, ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր»⁹ (ընդգծ. իմն է - Հ. Մ.): Թեև բանաստեղծն այստեղ նշում է, որ Առաքյալների մասին իր ասելիքն ըստ էության ավարտել է, բայց և այնպես Մատյանի Բան ՁԲ-ում (տ. 12-20) արտահայտում է մտքեր ու գաղափարներ, որոնք, իմ կարծիքով, չափազանց կարևոր են բանաստեղծի հոգում տեղի ունեցող տառապալից ապրումները հասկանալու համար: Նա գրում է.

Շաւիղ ինձ ելից նոքաք հանդերձեսցես յերանութիւնն
 փափագելի,
 Չայն բարի հովութեան նոցին յողջոյն ինձ կենաց քաղցր
 լուիցի:
 Մասն կալայց ի յանեղծութիւն փրկութեան տաւնեցեալ յուսոյն
 Ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս,
 Փառատրեալն դասուց, գետոցն բանականաց,
 Աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց,
 Լուսապայծառ թագիւն պճնելոց,
 Ի գարդ անկապուտ զարութեանն շնորհին պայծառացելոց,
 Իղովն զուարթութեան տիրական լուսոյն կատարեցելոց:

Շարունակելով իր խոսքը՝ այս անգամ մարտիրոսների մասին Նարեկացին ասում է, որ իրենց «հողագանգուած բնութեամբ» հանդերձ նրանք «Պսակեցան, բարձրացան եւ կենդանացան հոգեպէս / Արիաբար ելեալք ի յերկրէ, ըստ մարգարէին» (տ. 28-29) և լինելով «Աշակերտք առաքելոցն եւ չարչարակիցք նոցին»՝ իրենց գործերով հավասարվեցին նրանց, ուստի՝

Կատարեալ լրմամբ անպակասելեալ,
 Պարեն ի խրախճանս անկէտն երանութեան,—
 Որոց հաճոյական եւ ընդունական մաղթանաւք,
 Արիւնընծայ, վաստականուէր, քրտնակնդրուկ աղերսիցն
 յարգմանք
 Ընկալ՛ զիս նորոգ ըստ նոցին մասին՝
 Անեղծ փրկութեամբ ի քեզ արձանացեալ:

⁸ Նույն տեղում, էջ 438:

⁹ Նույն տեղում:

Վերջապես, նույն գլխի Գ մասում ճգնաժամների վերաբերյալ ասում է, որ հաղթահարելով ամեն կարգի դժվարություն՝ նրանք կարողացան հասնել «ի նա-
ահանգիստն կենաց» և այնտեղ համարձակորեն կապել «զթագն հաղթութեան»,
իսկ այժմ, առաքյալների ու մարտիրոսների հետ միացած, աղոթում են բանաս-
տեղծի համար, հետևաբար, աղոթակից դառնալով նրանց, Տիրոջից խնդրում է.

Արդ, լո՛ւր, հզար, հմարաւոր, գովեալ,
Զնոցայն՝ վասն իմ եւ զիմս՝ ընդ նոսին,
Ի նոցին գովեստ, **ի փրկութիւն իմ եւ ի փառս քո,**

Այնուհետև կիրառելով տրամաբանական-բանաստեղծական շատ նուրբ
հնար՝ բանաստեղծն Աստծու համար ժխտելով մարդուն բնորոշ մի շարք ստորո-
գելիներ, ընդհակառակը, նրան վերագրում է դրանց տրամագծորեն հակադիրը՝
լեւելայն հասկացնելով երկրային կյանքում մարդկանցից ստացած կամ կրած
պատիժները, ներկայում ունեցած վիճակը և ապագայի հանդեպ տաժաժ հույսը:
Այստեղ կարդում ենք.

Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ,
Ոչ ես կորուսիչ, այլ գտիչ,
Ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ,
Ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ,
Ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ,
Ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ,
Ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ,
Ոչ ես անիծիչ, այլ արինիչ,

Ոչ բերես վճիռ կորստեան,
Այլ կտակ ազատութեան:

Այս ամենից հետո բանաստեղծը, կարծես զգուշանալով ասվածը որպես բո-
ղոք ու դժգոհություն ընկա: Կելու վտանգից, հավաստում է.

Ոչ առաքին այսոցիկ տրտնջմունք,
Այլ անլուելի գոհաբանութիւնք:
Բա՛րձ գնեղս իմ, հզար,
Լո՛յժ գանձս իմ, արինեալ,
Քաւեա՛ գպարտիս իմ, ողորմած,
Զնջեա՛ զհանցանս իմ, գթած,
Մատո՛ մատն այցելութեան,
Եւ անդստին իսկ կատարեցայց:
Զի՞նչ քեզ, տէր, քան զոսին դիւրագոյն,
Եւ կամ զի՞նչ ինձ՝ պարտաւորիս կարելորագոյն,
Այլ կենդանագրեա՛, բարեխնամ,
Քոյինաստեղծ պատկերիս փշումն կրկին
Ի շունչ նորոգման լուսաւորութեան մաքրական շնորհի՛
Զամենամեղս ոգի պաշտպանեալ:

Եթե փորձենք համեմատել նույն ենթագլխից (Բան ԶԲ, Գ) վերը բերված եր-
կու հատվածները, ապա ակնհայտ կդառնա, որ դրանցում կա մի շատ կարևոր
ընդհանրություն: Առաջինում Աստծուն ասելով՝ «Ոչ ես անիծիչ, այլ արինիչ», իսկ
երկրորդում, խնդրելով լուծել իր վրա դրված անեծքը, դրանով իսկ փաստում է, որ
Մատյանը գրելիս ինքն իսկապես եղել է անիծված, որից ազատվելը տվյալ պա-
հին համարում է «պարտաւորիս կարելորագոյն» (Բան ԶԲ, տ. 118):

Ինքնըստինքյան հասկանալի է, որ եթե անիծված էր, ապա անպայման պետք է խնդրեր Աստծուց լուծել այն, քանզի միայն այդ ճանապարհով Աստված կարող էր իրականացնել բանաստեղծի իղձը՝ կենագործել և ապա բազմեցնել եկեղեցու հովանու ներքո կամ հավելել «ի տունն Դաւթի եւ անդուստ ի» տունն Աստծոյ, ինչպես խնդրում է Բան ՀԵ-ում: Քանի որ անիծված էր կամ տարագրված «յօրհնութենէ», այդ պատճառով էլ թեև Տիրոջ գալստյանը սպասում էր «առանց վրիպանաց» (Բան ԼԹ, տ. 44), բայց և այնպես մնացել էր «անպատրաստ եւ անհանդերձելի» (մ. տ., տ. 45): Ուստի ԿԸ բանում, իրեն համեմատելով աստվածաշնչյան հիմար կույսերի հետ, գրում է.

**Չզարդ հարսանեացն կրկին մերկացայ
Եւ զձեք վարուցն վերստին լքի,
Եւ դուռն մտին հարսանեացն աւասիկ փակի (տ. 62-64):**

Ավելին, բանաստեղծը, իր մասին ասելով «Եւ ես՝ անիծեալս մեծ տարագրութեամբ» (Բան ԿԴ, տ. 22), Աստծուց խնդրում է կենաց մատյանում չգրել՝ «Չմուրհակ պարտուց ինոցս անիծից» (Բան ՀԴ, տ. 65): Ասես հույս չունենալով, որ Աստված կարող է անմիջապես վերացնել անեծքը, Աստծու հաղթանակի հանդիսարան է համարում. «Եթէ զփակեալն մուտս կենաց ի սպառումն շնչոյս բացցես» (Բան ՀԴ, տ. 20):

Բանաստեղծը հաճախ խոսքի հեղեղում իր մասին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք ոչ մի կերպ չպետք է անտեսել: Օրինակ, Մատյանի ՀԱ բանում (տ. 109-118) կարդում ենք.

**Անդարձ տարագրեալս, անզղջական զառաժեալս,
Անմխիթար տրտմեալս, ինքնագրաւ գերեալս,
Մահու և ապականութեան ծառայեալս,
Անողորելի տանջեալս, անփրկելի մատնեցեալս,
Անպատուաստելի հատուածեալս, անարծարծելի շիջուցեալս,
Անկազուրելի խորտակեալս, անհանդերձելի կործանեալս,
Եւ եթէ պարտ է զսաստիկն աստանար սսել
Անարիմեալս անձին նախատինս,
Ահա գրեմ, գրեմ եւ ոչ անխայեմ
Ի խոիս նիւթեալ գեհենին:**

Ճիշտ է, բանաստեղծն այս ամենն անվանում է իր անօրինեալ «անձին նախատինս», բայց իրականում գործ ունենք ոչ թե ինքնանախատինքի ու ինքնադարձանքի, այլ տվյալ պահին հեղինակի ունեցած կացության գեղարվեստական ճշմարիտ պատկերման հետ:

Երբեմն բանաստեղծը կիրառում է ասելիքն արտահայտելու այնպիսի ձևեր ու միջոցներ, որ առերևույթ կարող է թողնել տրամագծորեն հակառակ տպավորություն: Մատյանի Բան ԶԳ-ում (տ. 11-18, 24-31), դիմելով երկնային Տիրոջը, ասես ոչ թե խնդրում, այլ պահանջում է.

**Յիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան
Եւ զոր ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ի բարի,
Եւ արա կատարեա՛ նոցին քաութիւն եւ ողորմութիւն:
Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ, տէր,
Իբրեւ զուրբս բամբասողաց,
Առ յաճախ սիրոյդ, որ ի յիս,
Այլ որպէս զչարս կշտամբողաց եւ իրաւամբք նախատողաց՝
Ներեա՛ յանցանաց նոցա:**

Արդ, յիշեա՛ գրո մեծութիւնդ, տէր,
Նայեցեալ ի յիմս անարգութիւն,
Եւ ընդ խնդրելս իմ ի քէն բարի՝ իմոցն առեկեաց,
Եւ դու առ քոյս, ըստ քում մեծութեանդ,
Անճառելի՛ս հրաշագործեսցես:
Մի՛ սատակեսցես զիմսն խածանողս, այլ փոփոխեսցես՝
Խլեալ զխտան բարս երկրաւորս՝
Զբարի՛սն արմատացուցես եւ յիս եւ ի նսսին...,

Ինչպէս դժվար չէ տեսնել, բանաստեղծը Տիրոջից խնդրում է քավութիւն տալ իր թշնամիներին և հանուն իր հանդեպ ունեցած սիրո՝ չբարկանալ նրանց վրա որպէս սրբին բամբաստողների, այլ, իբրև չարը կշտամբողների ու իրավամբ նախատողների, ներել նրանց հանցանքները: Ավելին, Աստծուն հիշեցնելով նրա մեծութիւնը, խնդրում է իր այդ նույն թշնամիներին, որոնց այս անգամ անվանում է նաև առեկներ ու «խածանող»-ներ, ոչ թէ սատակեցնել, այլ անճառելի հրաշագործութեամբ վերացնել նրանց մեջ եղած երկրային խտան բարքերը և արմատավորել բարին թե՛ նրանց, թե՛ իր՝ բանաստեղծի մեջ:

Իրավամբ ծագում են մի շարք հարցեր. նախ՝ ովքե՞ր էին այդ թշնամիները և ինչո՞ւ էին թշնամանքով լցվել բանաստեղծի հանդեպ: Երկրորդ, եթէ նրանք իրականում ոչ թէ սրբին բամբաստողներ էին, այլ չարը կշտամբողներ ու իրավամբ նախատողներ, ապա ո՞րն էր նրանց հանցանքը, որի համար Աստված պիտի ներել նրանց: Չէ՞ որ չարը կշտամբելու և իրավամբ նախատելու դեպքում նրանք պետք է որ խրախուսվեին ու օրհնվեին Աստծուց: Երրորդ, եթէ նրանք իսկապէս կշտամբել և իրավացիորեն նախատել էին չարը և ոչ թէ բամբասել սրբին, ապա ինչո՞ւ է բանաստեղծը Աստծուց խնդրում ոչ թէ սատակեցնել այդ առեկներին, այլ փոխել նրանց երկրային խտան բարքերը և արմատավորել բարին թե՛ իր և թե՛ նրանց մեջ: Չորրորդ, եթէ չարը կշտամբելն ու իրավացիորեն նախատելը, լինելով նրանց երկրային բարքը, խտան էր ըստ բանաստեղծի, որը պետք է փոխվեր, ապա ինչպիսի՞ն պետք է լիներ նրանց բարքը Աստծու կողմից նրանց մեջ բարին արմատավորելուց հետո: Անշուշտ դեռ կարելի է շարունակել բերված հատվածից անխուսափելիորեն ծագող այս կարգի տրամաբանական հարցադրումները, բայց ներկա դեպքում կարևոր է ոչ թէ դրանց քանակը, այլ պատասխանը: Ասենք նաև, որ դրանք խոսում են բանաստեղծի ոչ թէ մտքի հակասականության, այլ բանաստեղծական հանճարի բացառիկության մասին, քանզի կարողացել է մի կողմից թաքցնել իր բուն ասելիքը, իսկ մյուս կողմից՝ տեղ թողնել այն հասկանալու և բացահայտելու համար: Իսկ այդ բուն ասելիքը, իմ խորին համոզմամբ, հետևյալն է. կենդանության օրոք «ի մարդկանէ» սուրբ վկայված (Բան ՀԲ, տ. 66) բանաստեղծը ունեցել է նաև թշնամիներ, որոնք անվերջ հալածել, բամբասել ու չարախոսել են նրան՝ պատճառելով անսահման վիշտ ու ցավ, իսկ նա, որքան էլ դառնացել ու տառապել է այդ ամենից, կրել մեծամեծ կորուստներ ու զրկանքներ, ոչ միայն տեղի չի տվել, չի ընկճվել ու ընկրկել, այլև, ընդհակառակը, ինքնամոռաց նետվել է կենաց ու մահու պայքարի մեջ, որից դուրս է եկել, անշուշտ, հոգնած, ուժասպառ ու գրեթէ կիսամեռ, բայց քաջարի հաղթողի խրոխտ կեցվածքով, ուստի Բան ԿԶ -ում (տ. 70-73) իրավամբ ազդարարում է.

Քանզի և այժմ մինչ կենդանեալս խաւսիմ՝
Մեռեալ եմ անհասիդ,
Որպէս ի կորուստ մահուն սատակման՝
Ամենազարիդ հրամանի անեղծ եմ հաւատովքս:

Իսկ որ շահ տ գարմանալի է, այս ամենից հետո բանաստեղծը ոչ միայն չի չարացել իր թշնամիների հանդեպ, այլև, իբրև ճշմարիտ մարդասեր ու աստվածասեր, կարողացել է վեր բարձրանալ անձնական թշնամանքից ու ատելությունից և խնդրել Աստծուց ոչ թե սատակեցնել նմաններին, այլ փոխել նրանց երկրային խոտան բարքերը և սերմանել նրանց մեջ բարին ու գեղեցիկը՝ քաջ հասկանալով, որ դա նույնիսկ Աստծու համար շատ դժվար կամ իր բառերով ասած՝ «անճառելի» հրաշագործություն է:

Հարկավ ոմանք կարող են առարկել, թե չի կարելի բանաստեղծական խոսքն ընկալել ու մեկնաբանել ուղղակիորեն, բայց այդ դեպքում ինչպե՞ս մեկնաբանել հարսանիք բառը, որը գործածված է անուղղակի իմաստով: Համենայնդեպս մի բան պարզ է, որ հարսանիքի մուտքի դուռը «աւասիկ փակի» ասելով չէր կարող հասկանալ ուղղակի, աշխարհիկ իմաստով և ոչ էլ նկատի ունենալ այլոց, այսինքն՝ ընդհանրապես մարդուն, ինչպես հաճախ է անում, քանզի քաջ գիտեր, որ երկնային թագավորության կամ հարսանիքի բախտին արժանանում են մարդկանցից շահ տ քչերը, որոնցից մեկն էլ երազել էր դառնալ ինքը: Եվ բնավ պատահական չէ, որ բանաստեղծը, ասես հանճարեղորեն կոահելով Մատյանը հասկանալու հետ կապված դժվարություններն ու ծագելիք տարակարծությունները, հենց ելեղեցուն նվիրված Բան ՀԵ-ն, որի վերջվածքի քննությունից էլ ծնվել է սույն հոդվածը, ավարտում է հետևյալ ձևով. «Իսկ մեք, զորս գրեցաք, սմին եւ վկայեմք՝ հաւատացեալ որում կարգեցաքս, յանուն եւ ի փառս ամենակալ Երրորդութեանն եւ միում աստուածութեանն յաիտեանս յաիտեանից: Ամէն» (Էջ 554, ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Եզրակացություն. եթե Մատյանի հիմքում տեսնում ենք բանաստեղծի անձնական կյանքի ահավոր ողբերգությունը, ապա հասկանալի ու բացատրելի են դառնում ինչպես ամբողջ Մատյան-հրաշքի ծնունդը, այնպես էլ նրա բազում գրութներում բանաստեղծի կերտած շատ պատկերներ: Այս եզրակացությունը ոչ միայն չի հակասում ավանդական մարեկացիագիտության ընդհանուր ոգուն, այլև ուղակիորեն զարգացնում է այն, քանզի վաղուց նկատված է, որ էական տարբերություն կա տաղերի և Մատյանի հեղինակ մարեկացիների հոգեվիճակների ու լեզվամտածողության միջև, բայց չի բացահայտված դրա պատճառը: Օրինակ, մի առիթով իրավացիորեն առարկելով Կ. Քիպարյանին, Պ. Խաչատրյանը գրում է, որ Նարեկացու լավագույն տաղերում «ակնհայտ միտում կա դեպի ժողովրդական բառ ու բանը, կենդանի խոսքի երանգները, նկատելի են տաք գույները, կա զարման զարթոնքի հրճվանք, մինչդեռ Նարեկում պատկերները մեզ տանում են դեպի վերացական ոլորտ, երանգները տեղի են տալիս, առկա են գերազանցապես երկու իրարամերժ գույներ՝ սևը իբրև մոռայի, սպիտակը, լույսը իբրև աստվածային էության դրսևորում...»¹⁰ (ընդգծ. իմն է - Հ.Մ.):

Կամ թե՛ մի կողմից Նարեկացին իրավամբ համարվում է հայոց լեզվի անգուգական ճարտարապետ ու անգերազանցելի բառաշինարար, իսկ մյուս կողմից ըստ էության չեն արժևորվում ու իմաստավորվում իր մասին նրա գործածած այնպիսի բառեր ու արտահայտություններ, ինչպիսիք են՝ կշտամբեալ (Բան Բ, տ. 14), տարամերժեալ (Բան Բ, տ. 15), պարսաւեցեալ (Բան Բ, տ. 18), հերքեալ, տարագրեալ (Բան Բ, տ. 39), կենագործել (Բան Բ, տ. 101), վերականգնել (Բան Բ, տ. 102), դատակնիք (Բան Դ, տ. 29), կապտեալ (Բան Դ, տ. 34), տմանկ ի բարձրութեանց եւ հոգեւոր հարստութեանց (Բան Ը, տ. 48-49), անկեալ (Բան ԺԷ, տ. 8),

¹⁰ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 75:

«իմս հոգեւորական խորտակումն» (Բան ԻԵ, տ. 15), «անիծելոյս կրկին ստացումն» (Բան L, տ. 115), «առ պատուաստումն կտրեցելոյս» (ն.տ., տ. 124), «ի քեզ իսկ պատուաստեցայց» (Բան ԽԲ, տ. 33), «իմ է առակս վերջին կշտամբողական» (Բան Կ, տ. 62), «առ իս ակնարկէ զդիպուածոցն չար պատահմունս» (ն. տ., տ. 63), և այլն, և այլն, որոնք բոլորն ամբողջովին կամ մասամբ ունեն պատժվելու, տուժելու, զրկվելու և կորցնելու իմաստ: Ուստի, կամ պետք է ընդունել, որ այս և համանման բազում բառերն ու արտահայտությունները գործածելով իր մասին՝ բանաստեղծն արտահայտել է իր իրական վիճակը, ապրումներն ու զգացումները, կամ պետք է այդ ամենը և դրանցով կերտված պատկերները համարել իրական բովանդակությունից զուրկ, լոկ բանաստեղծական ձևի համար ասված, որով մեծապես մեղանշած կլինենք Նարեկացու և պատմական ճշմարտության հանդեպ: Չմոռանանք, որ Մատյանի հիշտակարանում բանաստեղծն ասում է, որ «ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում եզերեալ ընդունեցան քչամաիք եկեղեցոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սովերի արգասատրի» (էջ 642): Ընդունենք, որ եթե բանաստեղծն իր հրաշակերտությունն ստեղծելու համար կատարել է այդքան գործողություններ, ապա այն հասկանալու համար մեզինք պահանջվում է բազմապատիկ անգամ ավելին:

Г. К. МИРЗОЯН - Символ веры Нарекаци. - Обстоятельное изучение концовки главы 75 “Книги скорби” Григора Нарекаци показывает, что имеющееся в ней выражение “то моя вера в Троицу” соотносится не с началом той же главы (ст. 1-104 по изданию критического текста, Ер., 1985), а с главой 34. Тем самым, во-первых, существенно пополняются наши представления о принципах построения поэтом своей “Книги”, а во-вторых, окончательно отпадает выдвинутая некоторыми нарекациеведами точка зрения, по которой главы 34 и 75, как и главы 92 и 93, внесены были в “Книгу” другими.

В гл. 34 поэт говорит о Св. Троице, излагая свой символ веры по Никейскому Вселенскому собору, в главе же 75 говорит о церкви и вере согласно апостольскому и константинопольскому символам веры, что, по мнению автора статьи, чрезвычайно важно как в плане раскрытия исторических обстоятельств создания “Книги”, так и для понимания основных выраженных в ней идей. Подвергая сопоставительному анализу содержание указанных глав, автор приходит к заключению, что в период создания “Книги” Нарекаци был отлучен от церкви, почему и обращается к Господу с просьбой о спасении своем и возвращении в святое лоно церкви. По завершении 93-х глав “Книги” поэт действительно снискал прощение церкви, что и нашло свое отражение в главах, обозначаемых ныне как 92 и 93. Отсюда вывод, что при последующих изданиях “Книги” необходимо проинформировать соответствующие изменения, а именно: главы 92 и 93 переместить как 94 и 95, а последние как 92 и 93.

Таким образом, гениальное творение Нарекаци обретет свой первоначальный, по замыслу автора, вид, а идеи, в нем выраженные, станут доступней, понятней.